

**Ռուբեն Մեակի թանգարանին բացման օրը**  
**Յովհաննես Չիլինկիրեանի շնորհակալության խօսքը**  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին**

Միրելի հայրենակիցներ,

Այսօր հրաշքի մը առջև կը գտնուինք... Սուրբ Էջմիածնի այս Սուրբ հոգեբուն վրայ նոր հրաշք մը կատարուեցաւ...

...1915-ին Չանդըրը-ի մէջ իր Սուրբ Հաւատքին հաւատարիմ մնալու համար թրքանալը եւ իսլամանալը մերժող, եւ վարդանանցի հորոսներուն նման մեռնիլը նախընտրող Ռուբեն Մեակը Սուրբ՝ Էջմիածնի մէջ, այս թանգարանով վերակենդանացաւ եւ անմահացաւ...

Այս հրաշքը կատարեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ հայրապետը...

...Ես՝ մինչեւ գետին կը խոնարհիմ իր առջև եւ երախտագիտութիւնս կը յայտնեմ Վեհափառ Հայրապետին՝ իբր Ռուբեն Մեակի եղբորորդին... եւ մանաւանդ իբր ազգասէր եւ հաւատացեալ հայ մը...

...Ես այստեղ կուզեմ փոխանցել նաեւ Ռուբեն Մեակի դուտոր 99 տարեկան Շամիրամ Մեակի շնորհակալութիւնները Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ վեհափառին:

Շամիրամ Մեակ շատ ուրախ եւ խանդաւառ էր, որ ինծի հետ Երեւան պիտի ճամբորդէր եւ իր հօր անունով Սուրբ Էջմիածնի մէջ ստեղծուած թանգարանին բացման հանդիսութեան ներկայ պիտի ըլլար :

Բայց վերջին օրերուն իր տան մէջ ունեցած անկումը արգելք եղաւ այս ճամբորդութիւնը կատարելուն...

Կուզեմ նաեւ իմ խորին շնորհակալութիւնները յայտնել Երեւանի մանկավարժական համալսարանի ռեկտոր պարոն Ռուբեն Միրզախանեանին՝ Ռուբեն Մեակի թանգարանին ստեղծման համար իր տարած աշխատանքները անմոռանալի են...

Եւ կուզեմ նաեւ իմ սրտագին շնորհակալութիւններս յայտնել իմ հարազատիս՝ Յակոբ Աւագեանին, որ 2009 թուականէն ի վեր եւ մինչեւ այսօր այս թանգարանին իրականացման համար բացառիկ աշխատանք տարաւ...

Եւ իբրեւ վերջին խօսք կուզեմ իմ խորին շնորհակալութիւններս յայտնել Սուրբ Էջմիածնի անձնակազմին, որ գիշեր ցերեկ աշխատելով այս հրաշալի թանգարանը մէջտեղ բերին :

Անմոռանալի են բոլոր անոնք, որոնք հայութեան կը ծառայեն :

10 Սեպտեմբեր 2013

Սուրբ Էջմիածին

Յովհաննես Չիլինկիրեան